

յոտս իշխանաց, աղաչէր մի կորուսանել  
 զորդի նորա. Խնայեցէք, ասէր, յարխս իմ եւ  
 ողորմեցարուք ծերութեան իմոյ. զի եւ ես  
 225 իշխան եմ իբրեւ զձեզ եւ աթոռակից. ես  
 ձեզ տամ որդոյս կշռովն ոսկի՝ որչափ հակէ:  
 Եւ նոքա ասեն. Մեք յԱստուծոյ երկնչիմք եւ  
 Գրոց բանից ի դուրս ոչ ելնեմք. զինչ Գիրն  
 ասէ զայն առնեմք: Ոչ ի դրամն ազահեցան  
 230 եւ ոչ իշխանէն երկեան, այլ այրեցին զնա ի  
 մէջ քաղաքին: Եւ այսպէս ամենեւին հիւայ  
 կամ խալպ բան չերեւիլ:

Պատմեմ ձեզ բան մի այլ, զի եկաւ Ան-  
 կուրու եւ Սօփիու եւ Թօսու եւ այլ տեղաց  
 235 ըստ սովորութեան բազում սօփեր. զոր սա-  
 բաֆքն իմացան որ զալպ էր. զի կէսն կամ  
 աւելին օշխրի բուրդ էր խառնած: Կալան  
 զվաճառողքն եւ չարչարեցին, թէ դուք  
 զբուրդն փոխանակ տիֆաիկի ծախէք. նոքա  
 240 խոստովանեցան եւ ասեն. Ձի ոչ դտանի տիֆ-  
 աիք յաշխարհս մեր. զի ճէլալիքն աւերեցին,  
 քանդեցին զայն երկիրն, զայժքն զորս սպա-  
 նին, զորս տարան ընդ իւրեանս, վասն այն  
 այսպէս զաղալ գտաք ի ըոզակն մեր: Եւ  
 245 նոքա բերեալ զամենայն ի մօյտանն եւ զիղե-  
 ցին եւ կուտեալ փայտ ի վերայ անխնայ  
 այրեցին: Բայց զտէրսն անփնաս թողին:

Եւ այլ վաճառականք Ուոռմէլու մոմ  
 բերին. մեծ կէսն ճրագու էր. զայն իմացեալ  
 250 ըմբռնեցին զտէրս նոցա. եւ նոքա ետուն  
 ժՌ. դրամ, զի մի գատեցին. եւ նոքա չա-  
 ոին, այլ զմոմն կուտեալ առջեւ Սա Մար-  
 քոյին այրեցին. որ հալեցաւ եւ անյայտ եղեւ:  
 Եւ ասին թէ ԼՌ. զուռուշի էր մոմն. եւ  
 255 վասն այսպիսի արդարութեան եւ իրաւանց  
 ուղղեալ է աթոռն թագաւորութեան իւրեանց,  
 ըստ այնմ թէ Արդարութեամբ եւ իրաւամբ  
 ուղղեալ է աթոռ նորա:

Թէպէտ զինին շատ եւ առատ է, այլ ար-  
 260 բեցութիւն բնաւ ամենեւին չկայ ի մէջ նոցա.  
 եւ թէ ըմպեն՝ ջուր խառնեն եւ ջրով ըմպեն.  
 այլ եւ չկայ ի մէջ նոցա շլթախ եւ իֆդիրայ  
 եւ զուր. չունին զուլում եւ անխաւութիւն.  
 չկայ եւ որձապղծութիւն, եւ թէ ուրեք գտցի,  
 265 իսկոյն այրեն անխտիր: Չկայ գողութիւն,  
 սպանութիւն, հարամութիւն. ոչ թէ միայն  
 ի քաղաքսն, այլ եւ ի ճանապարհս եւ ան-

229 յազահեցան... յերկեան: — 237 յաւելին: —  
 239 զփութին: — 242 բանթեցին: — 255 յերաւանց:  
 — 257 յերաւամբ: — 264 ուրէք:

վար վայր տեղս եւ յանտառս մացառուտս.  
 եւ ոչ դիտեն անդ թէ քարվանն ինչ է, այլ  
 որ տեղ կամի ոք զնալ, միաւոր երթայ ա-  
 270 նահ. եւ թէ ոսկի թագ զնես ի գլուխո՞ ոչ  
 փնասիս. զի եւ մեք, որ անլեզու եւ անծանօթ  
 զարիպ էաք, յերկար ճանապարհնին զնայաք  
 խաղաղ եւ անդորր. որպէս ի ժամանակս  
 Մօրկայ կայսերն<sup>3</sup>: Եւ ամէն նետաձիգ՝ պան-  
 275 տոկ եւ չէնլիք կայ: Այլ եւ աղօթից եւ ժա-  
 մու ժիր եւ հաստատ են, աւելի քան զՄահ-  
 մէտականս. ոչ թէ միայն ծերք, այլ եւ  
 տղայք, կանայք եւ նոր հարսներ եւ կոյս  
 աղջկունք, ունելով զիրք ի ձեռս իւրեանց  
 280 երթան յեկեղեցիս. զի սոքա խրատեն զգա-  
 ւակն ըստ կանոնաց: Ոնց լեզուն բացվի՝  
 Հայր մեր, Հաւատամք, Ողջոյն եւ Փառք ի  
 բարձունս ուսցնեն. ձեռս խաչ հանել, առ  
 Աստուած յաղօթս տարածել. եւ մինչ ի ճաշ  
 285 կամ պատարագէն չենեն, հաց չեն ի տալ.  
 եւ ամէն օր մինչեւ աղօթք չանեն՝ չեն ու-  
 տել: Այլ եւ զփոքր տղայս առեալ ի ձեռաց  
 տանին յեկեղեցին: Եւ թէ ոք այր կամ կին  
 որ թէ օր մի ժամ չերթայ կամ պատարագ  
 290 չի տեսնու, կ'ամաչեն ի դուրս ելնել. կար-  
 ծեն թէ իբր մեծ փնաս են գործել: Եւ ողոր-  
 մութիւն բազում կայ առ նոսա, ծածուկ եւ  
 յայտնի: Եւ են յոյժ խոնարհ եւ հեզ, ան-  
 բամպաս եւ անխաչար:

Ապա վա՛յ եւ եղուկ յոյլ եւ ծոյլ անձին  
 իմոյ. զի կայ ազգս մեր, որ երկու, երեք  
 տարով եկեղեցոյ դուռն չեն կոխել. եւ ոմանք  
 սպիտակ ալեօք զՀայր մերն ոչ դիտեն, թող  
 295 թէ զՀաւատամքն կամ զայլ ինչ. այլ եւ ոչ  
 յերեսն խաչ հանեն, զոր Պօղոս գոչէ թէ Յու-  
 լից եւ ծուլից փակեալ է արքայութեան  
 դուռն:

Վասն աւրինաց պահպանութեան եւ  
 ստէպ աղօթից բազում բարեաց արժանի ա-  
 300 բար գնոսա Աստուած. եւ ապրեցոյց ի բազ-  
 մաղիմի հարուածոց եւ ցասման որ զան ի  
 վերայ աշխարհիս վասն ծովացեալ մեղաց,  
 որպէս լինի այլ երկիրն՝ ջորեակ, թրթուր,  
 ջալուկն, մարախն, մահատարածանն, սովք,  
 305 սրածութիւնք եւ այլն: Նա եւ ոչ թշնամիք  
 գան ի վերայ նոցա. այլ են խաղաղ եւ ան-  
 խոռով. ունին գանձս բազումս եւ խաղինայս,  
 զարպատս եւ վիմաչէն բնակութիւնս բազ-

<sup>3</sup> Հմմտ. Պատմութիւն Հայունեաց խաչին, Չեռ.  
 Վիեննայի Թ. 791, թղ. 132 ա. «ոմանք յառակս ար-  
 կեալ ասէին թէ «Իբրեւ յաւուրս Մօրկայ նստեալ էք  
 անհոգս»:

մայարկս. այլ եւ են երկարակեացք եւ ա-  
 315 ողջք, փափուկք մարմինք եւ սրբապահք.  
 եւ առաւել մրգօք եւ բանջարօք շատանան  
 քան թէ մսով եւ այլ անհալ կերակրովք: Եւ  
 պատմեաց մեզ այր մի ծեր ֆռանի, թէ ձի.  
 320 տարու եմ, եւ նոր ատամունք բուսել էին  
 նմա. եւ ասէր թէ ես իմ ժամանակս ոչ մահ  
 եմ տեսել, ոչ սով, ոչ սուր. եւ այս լու է,  
 թէ ոչ արդարութեան եւ յիրաւանց, որպէս  
 325 զազգս եւ արդարութիւնն բազմացունց  
 որդոց որդիս. եւ թէ Սէրն ծածկէ զբազմու-  
 թիւն մեղաց: Եւ այնպէս սէր եւ միարան են,  
 որ երբ տեսնան զմիմիանս՝ խոնարհութեամբ  
 330 զրկախառն համբուրիւ ողջունեն սիրով զմի-  
 միանս, որպէս թէ հեռու տեղաց են եկել.  
 կամ թէ վաղուց չեն տեսել զիրար: Եւ զայն  
 առանց երկբայութեան եւ կեղծաւորութեան,  
 զի սէրն է գլուխ օրինաց եւ պատվիրանաց.  
 335 եւ հազար երանի ազդին որ սէր ունի:

Արդ ո՛րպէս զովեցից զազգն սուրբ եւ  
 ընտիր, որ ի սկզբանէ մինչեւ ցայժմ կայ  
 հաստատ թագաւորութիւն նոցա եւ հայրա-  
 340 ստուած է միայն առանց մեղաց. իսկ մարդիկ  
 մեղօք զառածեալ ըստ մարգարէին. Ով է  
 մարդ որ կեցցէ եւ ոչ մեղիցէ. եւ Յոք ասէ,  
 Թէ միօրեայ իցէ ծնեալն, եւ այն ոչ է առանց  
 345 թիւն. վստահ պոռնիկն: Այլ եւ զամենայն  
 ժիժմունս ուտեն. կրեայ, նապաստակ, գորտ,  
 օձ եւ այլն, որպէս Եփրատացիք. եւ զայն  
 ոչ վասն ազահութեան, այլ վասն զօթութեան.  
 350 թեան, որպէս կատուն վասն զօթութեան.  
 եւ այլն վասն այլ իրաց: Եւ սեղանոյն ելա-  
 նեն կիսակուշտ եւ ոչ ազահին ի կերակուրն  
 կամ ի գինին բնաւ. այլ եւ չունին սովորու-  
 355 թիւն շատ նստիլ ի սեղանն եւ եր-  
 թան վօլպայ զարնել եւ զրոյց տալ: Ի պա-  
 հոց ուտեն ձուկն, ձէթ եւ այլ: Բայց եօթն  
 մահուչափ մեղաց ի բաց են. զի որպէս ասէ  
 Յակոբոս առաքեալն՝ Են մեղք որ ներելիք  
 360 երեւի ներելին, այլ առ այլ՝ մահուչափ. եւ  
 են ազգ որ ձուկ չուտեն, ոչ ձէթ, ոչ գինի,  
 են ազգ որ ձուկ չուտեն, ոչ ձէթ, ոչ գինի,

315 յերկարակեացք: — 340 մարդիք: — 347  
 յեփրատացիք... յազահութեան:

այլ բամպասանօք զմարդոյ միսն ուտեն,  
 հարբենան, ազահին որպէս զանասուն ի պա-  
 հոց եւ ոչ դուրանան մինչեւ զգօտիս չթու-  
 365 լացնեն. եւ Պօղոս ասէ. Ոչ չունք, ոչ ազահք,  
 ոչ արբեցողք կարեն ժառանգել զարքայու-  
 թիւն: Տեսէք թէ որպէս Փարիս ունի մեղք  
 մեղաց: Սոքա բնաւ հարբենան, չբանապանեն.  
 եւ թէ օտար ոք տեսնեն հարբած՝ հիանան  
 370 եւ փախչին ի նմանէ որպէս զիւահարէ. եւ  
 մեծ ամօթ է առ նոսա հարբիլն: Եւ կացաք  
 առ նոսա ինն ամիս. օր մի չտեսաք արբած  
 ֆռանի. զի զարբեցողն ընդ շնացողս համա-  
 375 լին որպէս Պօղոս: Վասն այս պատճառացս  
 լցել է Աստուած զնոսա հոգեւոր եւ մարմնա-  
 լոր բարութեամբ, լիութեամբ, ոսկով եւ  
 արծաթով, տամբք եւ տեղօք, ընչիւք եւ  
 սպրանօք, որդովք եւ դատերօք, ըստ այնմ  
 թէ Տեսցես զորդիս վայելուչ. եւ թէ Շտեմա-  
 380 բանք նոցա լի են, խաչինք նոցա բազմածինք  
 են եւ անդեայք նոցա պարարօք:

Եւ զայն թողով ի բաց, եկեսցուք ա-  
 ռաջարկեալ բանն մեր, զոր բազում քաղա-  
 քօք, գղեկօք եւ գեղեցկաչէն ամրոցօք ան-  
 385 ցանելով:

(Շարունակելի): Հրատարակեց՝ Հ. Ն. ԱՅԻՆՆԱՆ

**ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ**  
**ՃՈՎԱՆԿԱՅԻՆ**

ԻՐ ԿՆԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Ա.  
 ՆԱԽՆԻՔ

Այլազովսկի անունն —ուլսկի վերջա-  
 ծանցը կը թելադրէ ինքնին, որ տոհմիս նա-  
 խաւոր բնակութիւնը փնտռենք Լեհաստանի  
 սահմաններու մէջ: Եւ կը պատմէ արդէն  
 աւանդութիւնը, թէ Այլազովսկիները Լե-  
 հաստանէն զաղթած են Խրիմ: Ստուգիւ ալ  
 կը գտնուին Մոլտաւիա-Տրանսիլւանիա գծին  
 կը գտնուին Այլազներ, որոնք Գալիցիայէն տեղա-  
 փոխուած Մոլտաւիա, հոն իբրեւ կալուածա-  
 փոխուած Մոլտաւիա եղած են:  
 Լեհաստանի հայ գաղութի սկզբնաւորու-

363 յազահին: — 365 Պօղոս: — 382 յանդեայք:

Թիւեր շատ հին է. աւանդութեան համաձայն հնագոյն գաղթականները հասած են հոն Անիէն: Գարբու ընթացքին ընդունած է Լեհաստան նաեւ օսմանեան պետութեան հայաբնակ գաւառներէն՝ Կամախէն, Երզնկայէն, Փոքր Հայքէն, նոյն իսկ Խրիմէն նոր գաղթականներու խումբեր: Եթէ դժուար է այժմ ըսել, թէ Այվազներն ուսկի՞ց եւ ի՞նչ ճանապարհով եկան հաստատուեցան Լեհաստան, բայց տոհմին անունը չի թողուր տարակոյս, թէ անոնք օսմանեան պետութեան հայաբնակ գաւառէ մը տեղահան եղած անցած են Գալիցիա: Ժէ. դարու առաջին կէսին, երբ Լեհահայերը միացան կաթողիկէ եկեղեցւոյ հետ, անոնց թուին մէջ էին նաեւ Այվազները:

Ոչ տոհմանուան թրքական հնչումը եւ ոչ տոհմին թուրքիայէն գաղթած ըլլալը կարող է ապացոյց ծառայել, թէ Այվազները ծագումով թուրք եղած ըլլան, ինչպէս նաեւ Այվազովսկիներու խրիմաբնակ եւ ուսաստակ ըլլալէն կարելի է հետեւցնել, թէ անոնք ուս եղած ըլլան: Այս կէտերը կարելոր կը համարիմ չեչտել հոս, իբր պատասխան ուս եւ եւրոպացի հեղինակներու, որոնք Այվազները թուրք եւ Այվազովսկիները ուս կ'անուանեն. անոնք հպատակութենէն կը դատեն ազգութիւնը:

Այվազովսկի տոհմի մեղի ծանօթ առաջին անգամն է Կոստանդին, որ անհամաձայնութիւն մ'ունենալով իր եղբայրներու հետ, ՅԼ. դարու վերջերը կը հեռանայ Մուտախայէն եւ կ'անցնի Խրիմ եւ կը հաստատէ բնակութիւնը թերակղզւոյն վաճառաչահ կենդրոնին՝ ծովահայեաց թէոդոսիա քաղաքին մէջ:

Աւանդութիւնս կարող է կուսան ծառայել մեզ, վերհանելու Կոստանդինի հայրը յանձին Գրիգորի, որուն որդիները՝ Ներսէս (Norses), Ստեփան եւ Նիկողայոս, 1789ին ի Միտիով Բուկովինիոյ կալուածներ ձեռք կը բերեն<sup>1</sup> Թաղաւորական հրամանով: Այն պարզան որ Կոստանդինի անդրանիկ որդին Գրիգոր կը կոչուի, անշուշտ պատին անուամբ, կ'արդարացնէ մեր ենթադրութիւնը:

Կոստանդին թէոդոսիայի մէջ կ'ամուսնանայ հայ լուսաւորչական օրիորդի մը հետ, որուն անունը անծանօթ կը մնայ մեզի:

<sup>1</sup> Sadok Baracz, Zywyoty sławnych ormian w Polsce. Lwów 1856, էջ 7—8:

Այս ամուսնութեան պտուղները կ'ըլլան Գրիգոր, Աղեքսանդր եւ Յովհաննէս:

Գրիգոր ապագային իբրեւ կառավարական պաշտօնեայ կը մտնէ պետական ծառայութեան մէջ:

Աղեքսանդր կը յայտնէ իր մասին թէ «ճնած է ի Թէոդոսիա 1812ին ի հայասէր Հոռմէական Հայ հօրէ եւ ի Լուսաւորչական մօրէ: Մկրտուած է նոյն քաղաքին Լուսաւորչական Հայոց Ս. Գէորգայ եկեղեցին. եւ ի մանկութենէ Հայաստանեոց եկեղեցւոյ սպասարութեամբ եւ դպրութեամբ՝ ազգային արարողութեանց եւ ժամերգութեանց վերայ մեծ սէր ունեցել է»<sup>2</sup>: Պատանեկութեան հասնելէն ետքը կը յանձնուի Հ. Մինաս Բժշկեանի դաստիարակութեան ի Խարասուբաղար, որ տեսնելով պատանւոյն մէջ շնորհք, կ'ուղարկէ վենետիկ, Միլիթարեանց վանքը, ուր եւ կը քահանայանայ եւ անուանի կը հանդիսանայ Հ. Գարրիէլ Այվազովսկի (նաեւ Այվազեան) յորջորջմամբ իբրեւ մատենագիր եւ հասարակական գործիչ:

Կրտսերագոյնը՝ Յովհաննէս, որ ապագային պիտի պայծառանար իբրեւ ծովանկարիչ, կը ծնանի 1817, Յուլիս 17ին:

Կոստանդին Այվազովսկի, որ կը վայելէր առեւտրական ասպարէզի վրայ համբաւ, ծանօթ այլ եւ այլ լեզուներու, ստեղծած էր իրեն բարեկեցիկ գրութիւն մը, որ խանգարում կը կրէ 1812ին: Ահաւոր ժանտախտ մը որ ծագած էր Խրիմ, մեծապէս ազգած էր վաճառականութեան վրայ: Իբրեւ հայր ընտանիքի կը տանէր ամէն ջանք պահպանելու իր երգիքը անտեսական տաղնապի առջեւ: Ջրաւորութիւնը զգալի էր այդ երգիքէն ներս:

Բ.

ՄԱՆԿՈՒԹՒՆՆ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ  
Յովհաննէսի մանկութեան տարիները կը մնան մշուշով քողարկուած:

Իբրեւ ընտանիքի կրտսերագոյն անգամը վայելց անշուշտ Յովհաննէս՝ գուրգուրանք եւ սէր: Ինչպէս նախահոգ եղան ծնողքը, որպէս զի Գրիգոր եւ Աղեքսանդր ստանան ընտիր դաստիարակութիւն եւ նուիրուին իրենց սրտի բերումներուն, նոյնպէս ուշադիր գտնուեցան, որ նաեւ Յովհաննէս զարգանայ

<sup>2</sup> Պատմութիւն Պալիպեան վարժարանի. Թէոդոսիա 1880, էջ 2:

հոգեպէս: Ան ուրիշ խառնուածքի տէր էր. ուրիշ ուղղութեան կը միտէին անոր սրտի հակումները: Նուրբ էր անոր բնութիւնը, դիւրազգած շրջակայ աշխարհէն: Տպաւորութիւնները, զորոնք կը ստանար, կ'ապրէին իր մէջ երկար եւ կը զբաղցնէին իր միտքը: Գեղեցիկն ճաշակը տարտամօրէն կը կրէր նա իր զգածումներու մէջ: Մասնաւորապէս նկատելի էր իր մէջ բերումը դէպի երաժշտութիւն եւ նկարչութիւն: Չէր գոհանար իրերու տեսութեամբ միայն կամ ձայներու թրթռուն ելեւէջներու ունկնդրութեամբ, այլ կ'աշխատէր իւրացնել պատկերը եւ անդրադարձնել ձայները ինքնուրոյն ըմբռնումով:

Եւ թէոդոսիա շահաստանն, որ ամբիթէատրոնի կէս բոլորակով կ'ընդգրկէր իր ծոցը կապուտակ ծովը, կ'ընծայէր մանկան բարձրապիտի պատկերներ, ապաւորութիւններու ճոխ աշխարհ մը: Մասնաւորապէս կը հրապուրէր զինքը ծովը իւր վէտ վէտ կ'ահալներով եւ մրրկայոյց ալիքներով, երբ հեռուն՝ հորիզոնին վրայ կ'երեւային նաւերը ինչպէս սեւ կէտեր եւ տակաւ մեծնալով կ'երեւցնէին առաջաստները ու մերթ յաւազ եւ մերթ հողմակոծեալ ընթացքով կը հասնէին նաւահանգիստ թափելու հեռուոր աշխարհներու ալրանքները եւ միւսանդամ ահազձուռ՝ կը թողնէին նաւահանգիստը լին:

Ոչ նուազ հրապուրիչ էր նաեւ շուկայի եռուզեռ կեանքը, ուր խայտարակ տարագրները քաղաքացիներու եւ շինականներու կը խառնուէին իրարու, երբ եւ ժխոտ կը թընդացնէին տուն եւ հրապարակ:

Կը պատմուի, թէ մանուկն Յովհաննէս յաճախ առանձնացած սենեակի մէկ անկիւնը՝ կը դժագրէր թուղթի վրայ նաւեր, կառքեր, ծաղիկներ եւ դէմքեր. շատ անգամ նաեւ տան պատերը կը նկարագարուէին մանկան ձեռքով: Ծնողքը ուրախ էր, որ ան կը գտնէր ինքն իրեն զբաղում, կ'անցնէր իր օրերը օգտակարապէս եւ գուարթ:

Բայց Յովհաննէս գոհ չէր որ միայն տունն ու զբաղանքը զիտան իր նկարչութիւնն ու գծագրութիւնը. ամբողջ քաղաքն իմանալու էր, որ համեստ ու փոքրիկ տան մէջ կայ երեխայ մը, որ կրնայ գծել ու նկատել: Եւ ահա, տակաւին տասը մը ամուսնաւուտ կանուխ ձեռքին կտոր մը ամուսնաւուտ կանուխ ձեռքին տան դուրսի պատկերը: Նա պատանւոյն շարժումներուն եւ նուազը:

Ինչ ու կը նկարէ զինուոր մը մարդահասակ, այնքան վարժ ու կենդանի գծերով, որ անցորդներուն ուշադրութիւնը կը դրաւէ իսկոյն: Շատ մը ծանօթ ու անծանօթ քաղաքացիներ կու գան շնորհաւորել հօրը մանուկ Յովհաննէսի բնատուր ձերբերը: Ծնողքը կը սկսի խորհիլ տղուն ապագային վրայ:

Այժմ կը յաճախէր Յովհաննէս քաղաքին ծխական դպրոցը. հոս դրաւ մայրենի լեզուին՝ հայերէնի հիմը. միաժամանակ սկսաւ ծանօթանալ ուսուցիչին: Իր առաջին ուսուցիչներու անունները թէեւ չէ հասցուցած մեղի ժամանակը, բայց գիտենք, որ գծարութեան եւ նկարչութեան նախնական տաղրութեան եւ նկարչութեան նախնական տաղրութեան սորովեցաւ ճարտարապետ Կոխի քով, իբրքը սորովեցաւ ճարտարապետ Կոխի քով, որ Այվազովսկիի տան հետ բարեկամական ուր Այվազովսկիի մէջ կ'ապրէր: Կոխի առաջնորդութիւնը որքան ալ նպաստամտոյց եղաւ արուեստին հետամուտ Յովհաննէսի զարգացումին, չտուաւ սակայն այն բաւարար զորքերը, զոր կ'ակնկալէին գուցէ Յովհաննէս եւ իր ծնողքը:

Պատանւոյն առջեւ աւելի լայն հորիզոն բացաւ թէոդոսիայի քաղաքապետ Աղեքսանդր Կազնաչէն, որուն ազնիւ վերաբերմունքը հանդէպ Յովհաննէսի՝ դրաւ անոր ապագայ մեծութեան հիմերը:

Գէպքը, որ մերձեցուց պատանին քաղաքապետին, հետեւեալն է. Յովհաննէս բացի նկարչութենէ, ունէր բերում նաեւ դէպի երաժշտութիւն: Հայրը գնած էր իրեն ջութակ մը, որուն վրայ կը նուազէր մանկական երգերը, մեծ ընդունակութեամբ: Յաճախանալով զինքը փողոց նայող պատուհանին առաջ, ջութակը ծնօտին եւ կնտնտոցը ձեռքին, ինք իր մանկական զգածումներուն եւ հաճոյքին մէջ ընկղմած...:

Կը նուազէր անիկա, երբ դուարթ երեկոյ մը Աղեքսանդր Կազնաչէն կ'անցնէր մերձաւոր փողոցէն: Զուլթակին անոյշ ելեւէջները հրապուրեցին զանիկա, ուղղել իր քայլերը դէպի այն պատուհան, ուր կը նուազէր փոքրիկ ջութակահարը: Զուլթով խանդավառ ջութակահարը իր յափշտակութեան մէջ, լին ջութակահարը իր յափշտակութեան մէջ, փորձեց ունկնդրել զաղամօրէն: Արթուն երեսան սակայն նշմարելով քաղաքապետին ներկայութիւնը՝ յարգութեան համար կը դադարեցնէ մեղեդին: Նշանացի եւ ժպտով կը յորդորէ կազնաչէն անվրդով շարունակել իր նուազը: Նա պատանւոյն շարժումներուն եւ նուազը:

լարերու յատակ հնչիւններու մէջ նշմարած էր արտակարգ ձերք մը: Լսած էր միանգամայն անոր նկարչութեան մէջ ցոյց տուած ընդունակութիւնը:

Այս դէպքին վրայ քանի մ'օր հազիւ անցած էր, երբ ստացաւ Յովհաննէս ծրար մը, ուր գտաւ նկարչի մը համար կարեւոր պիտոյքներ՝ գունակալ, ներկ, վրձին, իւզաներկի խաւարարտ եւն: Ծրարը քաղաքապետէն նուէր զրկուած էր:

Յովհաննէսի ուրախութեանը սահման չըկար: Կոտանդին եւս զգաց՝ թէ քաղաքապետը մասնաւոր հոգատարութիւն մը ցոյց կու տայ հանդէպ իր որդւոյն: Կազնաչէեւ՝ հետզհետէ աւելի սերտօրէն կապուեցաւ այս հայ ընտանիքին ու անոր փոքրիկ տաղանդաւորին հետ, այն աստիճան՝ որ իր ամբողջ կեանքին մէջ մնաց բարեկամ, եւ քաղցր ու անմոռաց յիշատակն անոնց իր հետն էր մինչեւ գերեզման:

Կազնաչէեւի վիճակուելով բարձրագոյն պաշտօն մը՝ հարկ էր թողուլ թէոզոսիան: Տաւրիկեան Նահանգապետի պաշտօնով տեղափոխուեցաւ ան Սիմֆերոպոլ: Մտերիմ ու ազնուաբարոյ Նահանգապետն իր հետն առաւ Յովհաննէսն եւ իր սեփական ծախքով զինմագրին դրաւ հոն:

Բնական է, բարձրագոյն դպրոցի յաճախութիւնն աւելի պիտի նպաստէր իր մտաւոր եւ արուեստի զարգացումին: Հո՛ս էր, որ ան զիտութեան ու նկարչութեան մասին ընդարձակ եւ պայծառ դադար մը սկսաւ կազմել: Վարպետներու դասաւանդութիւններէն մեծապէս օգտուելով՝ պատանին արագ ու բազմակողմանիօրէն զիմեց դէպի կատարելութիւն:

Նա ոչ միայն զարգացուց իր գիտութիւնը, իր ճաշակը, այլ եւ զօրացուց իր կամքը, կրթեց իր վարմունքին անտաշութիւնները, ազնուացուց իր անձը ու դարձաւ սիրուած ու յարգուած աշակերտներէն մին: Պատանւոյն ճաշակագիտական ուսումը չմնաց տեսական եւ ամուլ, այլ Նահանգապետի շնորհիւ՝ անցաւ գործնականի, որ արդէն Յովհաննէսի սիրած արուեստին համար անհրաժեշտութիւն մըն էր:

Կազնաչէեւ յաճախ իր հետն առած ուսանող պատանին՝ կ'այցելէր իրեն ծանօթ ազնուականներուն: Յովհաննէսը կը ծանօթացնէր անոնց՝ այն նպատակով, որ անոր ամէն գիւրբութիւն ընծայէն:

Ասիկա լաւագոյն միջոցն եղաւ պատանւոյն իր արուեստը գործնականօրէն ալ մշակելու, վասն զի իրեն առջեւ բոլորին գոնորը բաց էին, ու նա ազատ համարձակ կը շրջէր ազնուականներու ծառայատ ու գեղեցիկ պարտէզները, եւ այս կամ այն պուրակը, աւազանը, ամարանոցներու քանդակը կը փոխադրէր թուղթի վրայ:

Յովհաննէս ամէնուն համակրանքն ու սէրը գրաւեց կարճ ժամանակամիջոցին մէջ: Իշխանուհիներէն կար մէկը՝ որ ամէնէն աւելի ջերմ ու խանդակաթ էր Յովհաննէսի հանդէպ:

Սա էր Նատալիա Նարիշկինա: Այլի էր այս իշխանուհին, եւ ունէր Յովհաննէսի հասակակից՝ երկուքէ աւելի որդիներ: Յովհաննէս ընտելացած էր այս տան, որ սիրով հիւրընկալած էր զինքը հոն անցնելու իր հանգստի եւ արձակուրդի ժամերը:

Օր մը՝ նկարիչ Յովհաննէս Նատալիա Նարիշկինայի որդիներէն մէկուն յայտնեց, թէ ինքը կ'ուրուագծէ «Սինագոգի հրեաները»: Իշխանուհին հետաքրքրուեցաւ այս նկարով: Անոր բաղձանքին վրայ պատանին տեղն ի տեղ նկարեց նոյնը: Նկարը ներկայացուեցաւ իշխանուհւոյն, որուն վրայ այնպիսի խոր տպաւորութիւն թողուց պատկերը՝ որ նա վճռեց աւելի հոգ տանիլ տաղանդաւոր պատանիին: Իշխանուհին այդ գործին մէջ նշմարեց ստեղծող ոյժ, կատարելութեան զիմող տաղանդ մը՝ որուն պիտի ժպտէր ապագան:

Մինչ տաղանդաւոր պատանին զինմագրի ուսումներուն մէջ օրէ օր հսկայաբայլ կը յառաջադիմէր ու կը դառնար վարպետներու ամէնէն յուսալից աշակերտներէն մին՝ անդին Նատալիա Նարիշկինա իշխանուհին, նոր ու աւելի՛ կրթիչ ասպարէզ մը կը պատրաստէր անոր: Իշխանուհին ձեռք բերած էր կարգ մը գծադրութիւններ ու նկարներ իր սիրելի Յովհաննէսէն: Այս պատկերներն, աւելի՛ նուրբ եւ աւելի՛ գեղեցիկ արտադրութիւններ, իշխանուհիին մէջ միտք մը ծնան՝ նկարները Մոսկուա, ճարտարապետ Տօնչիի ուղարկել, խնդրելով միանգամայն որ նա հաճի — իբր մտերիմ Նիկողայոս Ա. կայսեր — ներկայացնել վեհափառին, եւ անոր առջեւ բարեխօս ըլլայ պատանիի մասին: Նկարները զրկեց:

Տօնչին, արուեստէ հասկցող մարդ, իսկոյն նշմարեց անոնց մէջ արտակարգ ըն-

դունակութիւն եւ արուեստ՝ որ տակաւին իր կատարելագործութեան վերելքի մէջ կը զբաղուէր: Բայց ինքնակալի առջեւ հանել խընդիլը նա համարձակեցաւ, այլ յանձնեց դանոնք իշխան Վօլկոնսկիի՝ որ աւելի վարկ կը վայելէր կայսեր մօտ: Վօլկոնսկի՝ Տօնչին տեղեկացաւ Յովհաննէսի մասին, ինչ որ անհրաժեշտ էր գիտնալ, ու նկարները տարաւ ինքնակալին:

Ինքնակալը սիրող գեղարուեստի՝ հաճոյքով դիտեց դանոնք, ու յայտնեց իր կարծիքը անոնց գեղարուեստական արժէքի մասին: Դատաստանը ներշնչեց քաջալերութիւն: Իշխանը համարձակութիւն առած՝ խնդրեց ինքնակալին արտօնութիւնը, որով Յովհաննէս իրաւունք պիտի ստանար յաճախել Գեղարուեստի ձեմարանը: Կայսրը սիրով ընդունիլ նեցաւ առաջարկը, եւ հրամայեց ընդունիլ տաղանդաւոր պատանին հոն՝ իբր թոշակաւոր իր սեփական «Կարինտի»:

Նատալիա Նարիշկինա ուրախութեամբ տեսաւ իր ձեռնարկին եւ յոյսին իրականացումն ու յաջողութիւնը:

Յովհաննէս 1833ին՝ կիսաւարտ թողած զիննագրին ընթացքը, Պետերբուրգի Գեղարուեստի ձեմարանի սեմէն ներս դրաւ իր ուսքը, ինքնակալի հոգատարութեան եւ հովանաւորութեան ներքեւ:

Յովհաննէս՝ քսան տարեկան, վեթիւն՝ ամբակազմ ու գեղեցիկ երիտասարդ էր այլ եւս: Նա թողած էր ջուրհիւր. տենչ մը միայն կը վառէր իր սրտին խորքը — ըլլալ ծովին Երզնէ, մեծ Երզնէ, որ նախորդ դարերը ծնած չըլլային: Իր կամքը պողպատեայ էր, աչքերը սուր, միտքը թափանցող. նա կարող էր յուսալ այն փառաւոր Ապագային, որուն սկզբնաւորութեան քաջատուջ եւ յուսալի հիմք էր դրած:

Երիտասարդը ժպտադէմ էր: ձեմարանը ողջունեց զինքը:

Գ.

Յ. ԱՅՅԱԶՈՎՍԿԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՄԵՃ. ԻՐ ԱՊՐՈՒՄՆԵՐԸ

Երիտասարդ, արուեստի հետեւող Այվա-Ղովսկիին՝ իր վրայ հրաւիրեց թէ՛ վարպետներու եւ թէ՛ յառաջադէմ աշակերտներու ու շարքութիւնը: Արտաքինով արդէն համալրութիւնը: Արտաքինով արդէն ձեմարանը կրելի՝ հոգեկան ազնիւ յատկութիւններով ալ օժտուած՝ ան կարճ ատենուան մէջ կազ-

մեց զինքը սիրող եւ յարգող բաւական լայն շրջանակ մը: Բոլորը, առանց խտրութեան՝ անկեղծ վերաբերում մը ցոյց կու տային իրեն: Յ. Այվազովսկի ընտելեամբ արդէն ընկերասէր ու զուարթ՝ անոնց ընկերութեան մէջ գիտէր խառնել կենսունակ ու քաղցր բան մը՝ որ կը բխէր իր հոգիին, իր բնատրութեան ազնիւ ու վճիտ աղբիւրէն:

Ակադեմիայի մէջ ան գտաւ արուեստի յորդառատ ու բազմակողմանի պաշար: Իր ծովանկարչութեան դժուարին ուսումը կ'աւանդէր ծափանկարիչ Վարաբեւ: Համեստ կարողութիւն մ'ունէր սա, եւ սակայն բոլոր կարողութիւնն ծարաւին յագուրդ կու տար աշակերտներուն ծարաւին յագուրդը կու տար իր անվերապահ, անձնուէր դասաւանդութիւններով: Տեսական էր միայն Վարաբեւի ուսուցումը, նա կ'առաջարկէր նկարել ընտելեան այս կամ այն տեսարանը, որ յետոյ՝ հասարակաց քննադատութեան առարկայ կը դառնար, իսկ վերջին խօսքը միշտ կը վերադասուէր վարպետին: Նա իր կարգին, անկողմնակալ ոգիով կը մատնանշէր նկարին սխալները, լոյսի եւ ստուերի թերակատասխանները, ցոլացմունքի անճշտութիւնները ու հեռանկարի անհաստատ երեւոյթները: Իր առողջ դատողութիւնը արուեստի եւ նկարի մասին՝ մեծապէս նպաստեց Այվազովսկիին:

Նա իր թափանցող մտքով՝ արագ ու լիովին կ'ըմբռնէր մեկնող վարպետին իրաւացի գիտողութիւններն ու բացատրութիւնները: Իր ուշադրութիւնը դուրս չէր թափառեր, իր ուշադրութիւնը դուրս չէր թափառեր, ասոնք արուեստն ուսանիլ կ'ուզէին հաճոյքի ասոնք արուեստն ուսանիլ կ'ուզէին համար լուր, եւ երիտասարդ հասակի սին ու անմիտ գրօսանքներու ետեւէ կ'ըլլային, լրջանմիտ գրօսանքներու ետեւէ կ'ըլլային, լրջանմիտ Այվազովսկիին կ'աշխատէր հասունցնել իր մէջ արուեստը իբր անհրաժեշտ միջոց՝ իր յառաջադիր դադարաբախական հատնելու: Իր հաճոյքը նուիրումն էր իր անձին դէպի իր պաշտած արուեստը: Ուսումնասիրութիւններ, էջիւտներ, անդրադարձութիւններ, նորանոր լուսաւոր միտքեր՝ քաղուած բնուորանքներ, գրքերէն ու վարպետէն՝ իր վրձինի փորձերը կ'առաջնորդէին օրէ օր աւելի ճշդութեան, աւելի պարզութեան ու գեղեցկութեան:

Նա իր աշխատասիրութեամբ օրինակ հանդիսացաւ Ակադեմիայի միւս բոլոր աշակերտներուն: Իր աշխատանքը կրկին էր, նախ

կը սիրէր մանրամասն ուսումնասիրել իր նկարելիք առարկան կամ տեսարանը, եւ յետոյ հաստատ հիմք մ'ունենալով իր ըմբռնումի ճշգրտութեան՝ արտադրելու փորձը կը սկսէր: Ուսումնասիրութիւն, յարատեւութիւն, յամառ պայքար արուեստի իր թերութիւններուն դէմ՝ բնական է պիտի պահէին իր նկարները, աւելի կատարեալ շնորհքով քան իր ընկերակիցներուն փորձերը:

Վարարելի աչքին՝ Այվազովսկին ամէնէն յուսալի երիտասարդն էր: Այս յատկութիւններով օժտուած ուսանող նա դեռեւս չէր ունեցած: Ու մենք չենք զարմանար, եթէ այդպիսի լուրջ, մտացի եւ տաղանդաւոր արուեստի հետեւող մը արժանանայ Ակադեմիայի նախագահ Օլենիի մասնաւոր ուշադրութեան ու աջակցութեան:

Օլենին երիտասարդ Այվազովսկին մէջ ոչ միայն տաղանդը նշմարեց, այլ եւ հեղաբարոյ, ձգիչ, աշխատասէր ու ինքնամփոփ բնութիւնը, որ անոր տաղանդէն նուազ չէր փայլեր:

Յաճախադէպ էին վիճարանութիւններ այս կամ այն նկարչի կարողութեան մասին: Ակադեմիայի պատուաւորներ երիտասարդները վէճի առարկան լուսաւորելու նպատակով երկար ատեն կը սիրէին ընդդիմաբանել, եւ ոչ ոք կ'ուզէր պարտուած ըլլալ մինչեւ որ Վարարելի վճիռը հարցին լուծում տարով վէճին ալ վերջ տար: Սակայն Վարարելին ամէնէն աչքաուռ աշակերտն ըլլալով Այվազովսկին՝ արուեստի վերաբերած նիւթերու մասին իրմէ ալ լուսարանութիւններ խընդրելն հազուադէպ չէր:

Ո՛րքան ալ Ակադեմիական այս զեղադիտական ու արուեստի վիճարանութիւններն քիչ մ'անախորժ էին խաղաղասէր Այվազովսկիի համար, սակայն՝ տեսակէտով մը անոնք ընծայեցին քիչ շատ օգտակարութիւն, վասն զի յաճախ նորանոր անդրադարձութիւններ կ'ըլլային, նոր միտքեր ու խորհուրդներ կ'արթննային այդ առիթով:

Այսպէս էր կեանքն Ակադեմիայի մէջ: Այվազովսկիի համար գուցէ այնքան հաճելի պիտի չգար այս փակուած կեանքը, եթէ նա Պետերբուրգի մէջ՝ ձեմարանէն դուրս, չունենար աւելի ընդարձակ շրջանակ մը:

Նա չէր կրնար բնութեան գեղեցկութիւններէն բաժնուած մնալ, ո՛րքան ալ կարճ ըլլար այդ ժամանակամիջոցը: Արուեստի մեր-

ձեցումն առանց հարազատ մայր-բնութեան նուիրումին, պիտի նմանէր սափորը հորն իջեցնել մինչ աղբիւրն անդին կը գլլայ օրն ի բուն: Այվազովսկի բարեկամացաւ քաղաքացի Ալէքսէյ Տոնիլովի հետ, որ թանկագին նկարներու ժողովածու մ'ունէր:

Արուեստի հետեւողի մը համար մեծ առանձնաշնորհում էր օգտուել այդ նկարներէն: Տոնիլով սիրով տրամադրեց զանոնք Այվազովսկիի որ ուսումնասիրէ եւ զարգացնէ իր կարողութիւնը նկարչութեան մէջ:

Չմեռուան ընթացքին հեշտ էր նկարչին ուսումնասիրել վարպետներուն դործերը, տաքցուած դահլիճի կամ ընդարձակ սենեակներու մէջ: Բայց ամա՞րը... նա կը նեղուէր պատերու մէջ, իր սիրտը միայն ազատ ու անսահման ընթելէր կրնար դոճացնել: Տօնիլով նկարչին մտահոգութիւնն իսկոյն փարատեց, մեծ ուրախութիւն պատճառելով անոր:

Քաղաքէն դուրս Տոնիլով ունէր ընդարձակ կայուած մը ծառաշատ, դալար դաշտեր ու բլուրներ, պուրակներ, որոնցմէ անդին կը ծխային գիւղեր, կ'երեւէին կապուտակ լեռներ: Ամառն այստեղ սքանչելի էր:

Այվազովսկի ամառն անցուց Տոնիլովի ամարանոցը: Նա չէր գիտեր ինչքան շնորհակալ ըլլալ այդ բարի մարդուն: Վասն զի մէն օր յօրինանիւթ կը գտնէր այստեղ, կը դժէր, կը նկարէր ինչ որ տպաւորութիւն մը կը թողուր իր հոգիին մէջ, եւ այսպէս՝ նա փարթամ պաշարով քաղաք կը վերադառնար, դասերուն հետեւելու:

Բնութեան եւ արուեստի այս կրկին ազդակներն երիտասարդ նկարչին մէջ հզօր թուիչքներ գործելու միաններն արթնցուցին: Նա զգաց, թէ վրձինի շարժն աւելի՛ հաստատուն է հիմայ, իր երեւակայութիւնն աւելի՛ խիզախ, ու իր փորձերն աւելի՛ կատարելագործուած:

Մինչ Այվազովսկի խաղաղօրէն Վարարելի ձեռքին տակ իր արուեստին հետամուտ էր, ու բնանկարչութեան հետ կը մշակէր ծովանկարչութիւնը, Ակադեմիայի համար ուրիշ վարպետ մը սահմանուեցաւ ինքնակալին բազմանքին համաձայն:

1835 թուականին Պետերբուրգ եկած էր գաղղիացի ծովանկարիչ Ֆիլիպ Տաննէ (Tan-ner), որ արուեստագէտի համբաւ էր հանած, բայց բնութեամբ փառամոլ եւ կոուսակէր՝

կը բաղձար ամէն շրջանակի կենդրոնն ինքն ըլլալ:

Իր մասին Նիկողայոս Ա. այնքան էր լսած՝ որ նա քաջ նկարիչ է, եւ զինքը ձեմարանի ուսուցչապետ կարգելով՝ յոյսն ունէր Ակադեմիայի կրթութեան մակարդակն աւելի բարձրացնել ու պայծառացնել:

Տաննէ կը դասախօսէր նկարչութեան արուեստի մասին: Նա ունէր արուեստին հմտութեան հետ՝ զայն աւանդելու կարողութիւնը: Միանգամայն բեղմնաւոր ծովանկարիչ՝ ան կ'արտադրէր զանազան տեսարաններ՝ Դաղղիայի, Իտալիայի եւ Ռուսաստանի ծովափներէն, եւ իր նկարներուն մէջ կար իսկապէս տաղանդի փայլ:

Օր մը ուսն ինքնակալը Ակադեմիայի նախագահ Օլենիի հետ տեսակցելով՝ Տաննէի ծովանկարներուն մասին լսեց դրուատիքներ, եւ անոր վրայ իր համարումն աւելի հաստատեց ու ընդարձակեց: Բայց ինքնակալին բաղձանքն էր՝ որ այդ վարպետն իրեն չափ կաճանքն էր, որ այդ վարպետն իրեն շափ կարող աշակերտներ հասցնէր, եւ Ռուսաստանի փառքն աւելցնէր անոնցմով: Ուստի Օլենիի հարցուց՝ թէ Ակադեմիայի մէջ չկա՞ն երիտասարդներ որ Տաննէի աշակերտիլ կարենան, ունենալով որոշ չափով ընդունակութիւն եւ հասկացողութիւն Տաննէի արուեստին:

Նախագահը կայսեր տուաւ Այվազովսկիի անունը, իբր ձեռնասուն, կարող ու մտացի աշակերտ Ակադեմիայի: Միւսներն աւելի սիրահարներ էին արուեստի՝ քան լրջամիտ հետեւողներ:

Հետեւանքն այն եղաւ՝ որ երիտասարդ Այվազովսկին յանձնուեցաւ ծովանկարիչ Տաննէի մասնաւոր խնամքին, որպէս զի ան փութացնէ արուեստի հասունութիւնը Ակադեմիանին մէջ:

Այվազովսկիի մասին Տաննէ շատ բան լսած էր արդէն Պետերբուրգ գալով: Եւ այժմ իր աչքով կը տեսնէր տաղանդաւորին արտաբերող ընդունակութիւնը եւ իր ճիշդ դէպի արուեստին փառայեղ բարձունքները՝ երբ ան կարգուեցաւ առանձնապէս անոր ուսուցչելու վարպետ:

Յառաջադէմ Ակադեմիական մի՛շտ աչքաուռ, մի՛շտ որոնող լուսաւոր միտքերու՝ քիչ ժամանակի մէջ ցոյց տուաւ զարմանալի թուիչքներ ստեղծագործութեան սահմանին վրայ:

Իր մէջ հասունութեան մօտենալ սկսաւ հեռանկարի եւ գոյներու համերաշխութեան ըմբռնումը: Իր փորձերն արդէն կը նկատուէին դնահատանքի արժանի նկարներ: Մինչ արուեստի հետեւողն ու իր ընկերակիցները կ'ուրախանային որ ուսական Ակադեմիան եւս իր սեփական փառքը պիտի ունենար, անդին Տաննէի փառասէր ու նախանձոտ բնութեան մէջ արթնացաւ տեսակ մը տհաճութիւն հանդէպ Այվազովսկիի փորձերուն եւ նկարներուն: Տհաճութիւնն անոր յառաջադիմութեան հետ զուգընթաց՝ մեծացաւ, խորացաւ, ու դարձաւ իսկապէս կիրք — նախանձ — որ բնականօրէն պիտի տանէր օր մը՝ աննախատես ու կործանող ելքի մը:

Այվազովսկի՝ սրամիտ ու հեռատես, համբերեց ժամանակ մը վարպետին տհաճութիւններուն, վարկաբեկութիւններուն, կարծելով թէ ան պիտի շտկէ իր վերաբերումն իրեն հանդէպ: Չուր տեղ:

Տաննէի կիրքն աւելի եւ աւելի նկատուի դարձաւ: Նա վերապահութիւն մը սկսաւ ընել կարեւոր ծանօթութիւններու, եւ իր դասաւանդութիւններն այլեւս չէին բովանդակեր յառաջուան բազմակողմանի անդրադարձութիւններն ու միտքերը: Աւելի յառաջ երթալով նախանձը փոխուեցաւ արհամարհանքի:

Այվազովսկին չէր նկատեր ան իբրեւ արուեստի հետեւող, այլ իր ձեռքին տակ որպէս ծառայ՝ որ կը գործածէր անկարեւոր, անպէտ ծառայութիւններու:

Հակառակ այսպիսի անարդար վերաբերմունքի՝ աշակերտն անաքիտութիւնն ունեցաւ վարպետին դէմ չըմբոստանալու, թէեւ ծանր էր իր հոգեկան վիճակին դրութիւնը. մասնաւոր թէ բարեկիրթ երիտասարդն իր համարումն ու յարգանքը ցոյց կու տար անոր, վարպետն հաճելու համար:

Անօգուտ էր ամէն փորձ: Վարպետն ու աշակերտը լուռ կռիւի մէջ էին այլեւս: Իրենց հայեացքներն հագիւ կը հանդիպէին իրարու. տեսակ մը քաշուած տխրութիւն մը կար Այվազովսկիի մօտ. իսկ վարպետի դէմքը լի էր արհամարհանքով:

Այսպէս չէր կարող շարունակուիլ վարպետի եւ աշակերտի յարաբերութիւնը: Ակադեմիայի նախագահն Օլենի, որ կը հետեւէր Տաննէի վերաբերմունքին, Այվազովսկիի

վշտահար սիրտն կերպով մ'ամոքելու համար խորհեցաւ յանձնարարել Այվազովսկիի նկար մը շինել: Իր մօտ կանչելով զինքը՝ յայտնեց իր գաղափարը, եւ աւելցուց թէ նկարը պիտի դրուի աշնանային պատկերահանդէսի մէջ: Այվազովսկին յանձն առաւ:

Այս առիթն իրեն համար որոշ չափով մխիթարութիւն էր, քանի որ նախագահին ձեռնտուութիւնը անկյայտնի փաստ մըն էր իր անձի պաշտպանումին՝ հակառակ վարպետին լքումին:

Սակայն դիւրին չէր այնքան, վրձին շարժել պատտառի վրայ՝ իր նախանձոտ վարպետի աչքին առջեւ: Նա պիտի հարցաքննէր թէ ո՞վ է յանձնած իրեն նկարել, ինչո՞ւ կը ձեռնարկէ իր կարողութեան սահմանէն դուրս գործերու:

Այսպիսի խօսքեր նա շատ էր լսած, անոր համար Այվազովսկին որոշեց հիւանդ ձեւանալ, եւ Տաննէի աչքէն հեռու՝ ծովանկարի մը պատրաստութեան նուիրել իր ժամերը:

Սորհուրդն եղաւ գործ: Նա հեռացաւ ժամանակ մը Ակադեմիայէն՝ եւ առանձնասենեակին մէջ սկսաւ բանիլ նկարի վրայ: Պատառի վրայ պիտի գար ծովային տեսարան մը:

Ասիկա իր առաջին հրապարակային գործը պիտի ըլլար. այս պատճառով նա չուզեց խնայել ո՛չ ոյժ, ո՛չ ալ ժամանակ:

Մինչեւ պատկերահանդէսի բացումը՝ նա ունէր բաւական ատեն: Պատկերին յորինանիւթն արդէն յղացուած էր, եւ ան կը ջանար իր ամէնէն ազնիւր դնել իր «երախայրիքին» մէջ, ամէնէն գեղեցիկ խողերն ստեղծել լոյսի, ալիքի եւ գոյներու բխողականութեան:

Բաց ասկէ նկարը պատուոյ խնդիր էր նոր հրապարակ ելլող նկարչին համար: Անկէ կախուած էր իր ապագան:

Երկար աշխատանքէ վերջ՝ նկարը հասաւ իր վերջնական փայլին: Օլենիի հրամանով նկարը դրուեցաւ պատկերահանդէսի մէջ՝ ուրիշ նկարիչներու բազմաթիւ գործերուն հետ:

Իսկապէս գեղեցիկ էր Այվազովսկիի ծովանկարին տեսքը: Նկարահանդէսի այցելուներն առաջին իսկ օրէն հետաքրքրուեցան այդ պատառով: Իր մթնոլորտի գոյներուն, ալիք-

ներու շարժին ու թափանցիկութեան մէջ կը նկատուէր ոչ միջակ կարողութիւն մը:

Յետոյ՝ Այվազովսկին ալ շատ անձանօթ չէր Պետերբուրգի համար: Այս պատճառով խուռն այցելուներ, խումբ խումբ, կանգ առին անոր առաջին գործին առջեւ, եւ հիացմունքով համակուած՝ դրուատիքներ հիւսեցին նկարչին:

Ակադեմիան այս յաջողութիւնը պսակեց արծաթէ միտալով:

Աշակերտին յաջողութիւնն ու փառքը՝ նախանձոտ վարպետը կատղեցուց այս անգամ: Նա մինչեւ ինքնակալի դահին առջեւ հանեց խնդիրը, բողոքելով թէ Այվազովսկի առանց իր թոյլտուութեան նկարահանդէսին է մասնակցած. թէ նա ըմբոստ աշակերտ է, ու իր խօսքը չի լսեր:

Տաննէ տեղեակ էր, որ նախագահին յանձնարարութեամբ էր շինուած նկարն ու անոր հրամանով դրուած պատկերահանդէսին մէջ:

Սակայն կիրքը լոյս հոն այս մասին, ու կայսրը բորբոքեցաւ «ըմբոստ աշակերտին» դէմ: Նիկողայոս Ա. չափազանց խիստ էր հպատակներու հնազանդութեան կէտին մէջ: Ուստի անմիջապէս հրամայեց Վօլկոնսկի իշխանին՝ որ Այվազովսկիի նկարը վերցնել տայ պատկերահանդէսէն:

Հրամանը գործադրուեցաւ: Այցելուներու հոծ բազմութեան առջեւ՝ Այվազովսկիի ծովանկարը վերցուեցաւ պաշտօնական ձեւով:

Այս երեւոյթը շատերուն մէջ այն գաղափարն յառաջ բերաւ, թէ Այվազովսկիի այդ գործին մէջ նկարչական մեծ թերութիւններ գտնուած ըլլալու են. այլապէս անբացատրելի էր ժողովուրդին հեռացման պատճառը:

Ոչ ոք զիտէր, թէ Տաննէի բողոքին ազդեցութեամբ յառաջ եկաւ այդ անպատահութիւնը, որուն մէջ լայն բաժին մը կար վարկաբեկութեան ու կրքի, ծածկուած Ակադեմիայի վարպետներուն իրաւական նախանձախնդրութեան քողին տակ:

Տաննէ յաջողեցաւ միտքերը պղտորել: Այվազովսկիի նոր տարածուող անունն ու համբաւը՝ գոհարիկ ժողովուրդի մէջ պահ մը տարակուսանքի ու երկմտանքի ենթարկուեցաւ:

Նոյն իսկ անոնք՝ որ երէկ անոր նկարին առաջ դրուատիքներ կը հիւսէին՝ չհամարձակեցան քաջալեր հանդիսանալ լքուած նկար-

չին շա՛տ ցաւած սրտին...: Այվազովսկիի համար մահացու էր այս հարուածը՝ եթէ ան իր նկարագրի կազմին մէջ չունենար պահած պողպատեայ բան մը:

Նա որո՞ւն պատմէր, եւ ինչպէ՞ս պատմէր իրողութիւնը: Կայսրը հաւատացած էր Տաննէի խօսքին եւ իր վրայ զայրացած: Օլենի՝ հակառակ իր ճշմարտասիրութեան՝ չունէր քաջութիւնը կայսեր առջեւ պաշտպան հանդիսանալ աշակերտին՝ ընդդէմ անարդար եւ անիրաւ վարպետին:

Այսպէս, ինքն իր բախտին թողուած, անտէր անպաշտպան, վշտաբեկ Այվազովսկին քաջուեցաւ ժամանակի մը համար իր առանձնասենեակը, հող ու «դարտ» ընելով որ իր ամբողջ ապագան մէկ նկարի ձախողութենէն՝ դարձաւ ոչինչ...:

Սակայն Ակադեմիան ուսանողները տեղեակ էին Տաննէի եւ Այվազովսկիի միջեւ դոյութիւն ունեցող խուլ պայքարին: Անոնք յաճախ իրենց ընկերին այցելութիւններ կու տային, եւ յոյսերով կը սփոփէին անոր լքուած ու թախճոտ սիրտը, որքան հնար էր:

Ակադեմիայի մէջ Այվազովսկիի այցելեց յայտնի ուսու բանաստեղծ Ժուկովսկիի, որ լեց վտահ էր նկարչին մեծ կարողութեան: Նա քաջալերեց զինքն ըսելով. «Մի՛ վհատիր քաջալերեց զինքն ըսելով. «Մի՛ վհատիր դու, յառաջուան պէս եռանդուն շարունակէ պրուեստը՝ որուն մանկութենէ նուիրուած ես»:

Ուրիշ անգամ ալ հռչակաւոր առակախօս Կրիլով զալով Ակադեմիա, փափաղեցաւ տեսնել Այվազովսկին, որուն մասին շատ բան լսած էր: Նա տեղեակ էր, որ գաղղիացի նկարչապետը Տաննէ շատ խոր ցաւ էր պատճառած անոր դիւրապահած ու ազնիւ սրտին: Երբ նախագահը Կրիլովի ներկայացուց Այվազովսկին՝ հռչակաւոր առակախօսը համբուր մը դրոշմեց անոր ձախտին, եւ ցոյց տուաւ իր կատակախառն խօսքերով թէ՛ ցաւակցուի իւր եւ թէ՛ պաշտպանութիւն. «Ի՞նչ է... քեզ վշտացո՞ւց Ծրանսացին, ոչի՛նչ, ոչի՛նչ. թող Տէրն իր հետն ըլլայ, դու մի՛ վշտանար»:

Երկու նշանաւոր դէմքերու ցաւակցութիւնն ու խրախոյսը՝ Այվազովսկիի տրամուծեան մէջ քիչ մը զուարթացնող եւ սփոփարար բան մը խառնեցին:

Նկարիչն զգաց, որ ինքը չէ լքուած բո-

լորէն, եւ թէ յոյս մը կը պլպլայ իր ապագայի մոռյլ ուղիին վրայ:

Սրտոտ պաշտպան մը հարկ էր, որ նկարչին բախտին մէջ վերջնական դեր մը խաղար, եւ հնարաւոր էր իրեն դուրս գալ այս հողեմաշ դրութենէն՝ ուր ան մնաց երկար ժամանակ:

Ամպոտ օրերը վերջանալու էին, եւ ծագելու էր կենսատու, զուարթացնող արեգը՝ նկարչի սրտին մէջ:

Գ.

ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա.Ի ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԱՅՎԱԶՈՎՍԿԻԻ ՀԵՏ

Այվազովսկիի դէմ եղած անիրաւ վերաբերմունքը չէր կարող երկար դիտել Ակադեմիայի ուսուցչապետ Զառէրվայդ, որ միանգամայն մեծ իշխաններու եւ իշխանուհիներու նկարչութեան վարպետն էր, եւ մին կայսեր սիրելի անձնաւորութիւններէն:

Ուսուցչապետը խոհեմութիւն համարելով ինքնակալին անձամբ չներկայանալ Այվազովսկիի խնդրին մասին՝ դիմեց այն իշխաններուն եւ իշխանուհիներուն, որոնց հետ ան մտերիմ յարաբերութիւն մը կը մշակէր: Ասոնք իրօք է, անտարբեր չմնացին Այվազովսկիի մասին՝ երբ տեղեակ դարձան իրողութեան, եւ ուսուցչապետին միջոցով յայտնեցին իրենց անկեղծ եւ խոր կարեկցուելիւնը. սակայն անոնցմէ ո՛չ մէկն կրցաւ յանձնառու ըլլալ ինքնակալին առջեւ բարեխօսել, նախազուշուրթիւն ընելով, մի՛ գուցէ վատ եւ անհաճոյ քայլ մ'առնելով աւելի գէշ ելք մը ունենայ խնդիրը:

Այդ օրերուն Տաննէի վիճակն ալ փոխուեցաւ: Նա չփացած ինքնակալի իրեն հանդէպ տածած համակրանքէն ու համարումէն՝ յանդգնութիւնն ունեցաւ արքունիքի բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ բախիլ եւ գանոնք արհամարհել:

Կայսրն սկսաւ ճանչնալ իսկական Տաննէն, եւ օրէ օր համոզուեցաւ, թէ ան շատ կը տարբերէր իր նախապէս կազմած մտաւորութենէն: Փառասէր, ինքնահաւան եւ պատկերէն: Փառասէր, ինքնահաւան եւ կոռուարար բնաւորութիւնը գաղղիացի նկարչին՝ այնքան անհաճոյ դէպքեր յառաջ բերաւ արքունի շրջանակին մէջ, որ Նիկողայոս Ա. հրամայեց անոր հեռանալ իր տէրութեան սահմաններէն:

Գաղղիացի նկարիչն հեռացաւ Ռուսաս-

տանէն, թողով բաւական թիւով նկարներ Ձմեռնային Պալատի եւ Էրմիտաժի մէջ:

Չառէրվայդ հիմայ շօշափելի փաստ մ'ուներ ձեռքին մէջ ինքնակալին Այվազովսկիի դէմ ունեցած դայրոյթն անտեղի յայտարարելու եւ Տաննէի մասին ճակատաբաց խօսելու:

Գարնան նախօրեակին էր, երբ ուսուցչապետը հանդիպում մ'ունեցաւ կայսեր հետ, իր պալատի դահլիճներէն մէկուն մէջ: Նիկոլայոս Ա. մինակ էր այդտեղ. նա կը խօսէր պալատական պաշտօնեայի մը հետ, եւ ձեմելով դահլիճի երկարութեանը մերթ ընդմերթ աչք կը յառէր Տաննէի թողած նկարներուն վրայ, ու իր անկողնակալ հոգիով կը դատէր այս կամ այն նկարին ներկայացումը, գունաւորումը, բնականութիւնը կամ անբնականութիւնը:

Ուսուցչապետ Չառէրվայդ, որ ներկայ էր կայսեր անաչառ դիտողութիւններուն ու դովեստին՝ խօսք առաւ ու յայտնեց թէ «մեր ողջ նկարիչ Այվազովսկիին Տաննէէն վատ չի նկարեր»: Հաստատուն շեշտ մը կար ուսուցչապետին խօսքին մէջ. կայսեր դէմքէն ստուեր մ'անցաւ, խոփոնեց պահ մ'իր նայուածքը, եւ կիսադէմ դարձած Չառէրվայդի կողմը ցոյց տուաւ իր հոգիին վրդովմունքը: Նա էր սպասեր այդպիսի դատաստան մ'անոր մասին՝ որ արժանացած էր իր բարկութեան: Ուսուցչապետն իսկոյն բացատրութիւն տուաւ կայսեր, եւ յայտնեց թէ Տաննէ անկեղծ էր եղած իր ամբաստանութեան մէջ, նա ծածկած էր այն իրողութիւնը, թէ Այվազովսկիին ինքնագլուխ էր մասնակցած այդ նկարահանողէսին, այլ Ակադեմիայի նախագահի հրամանով:

Ու յառաջ տանելով իր խօսքը՝ կայսեր առջեւ պարզեց Տաննէի չար նախանձը հանդէպ իր աշակերտի կարողութեան ու յաջողութիւններուն:

Կայսրն ըմբռնեց Տաննէի ծածկամտութիւնը եւ դիտումը, եւ զգաց որ անտեղի էր իր խիստ վերաբերմունքը հանդէպ Այվազովսկիի: Նա էր կրցած լսել իրողութիւնն ինչպէս որ էր:

Վշտացած իր անարդար գործքէն, որուն առաջնորդուած էր նախանձորդ Տաննէն՝ Չառէրվայդին ըսաւ.

— Ինչո՞ւ կանուխէն ինձի էջեր ըսած խնդիրը:

Ուսուցչապետն ինք զինքն ամփոփելով եւ ժպտերես պատասխանեց.

— Վեհափառ կայսր, փոթորկի պահուն փոքրիկ նաւակներու համար անվտանգ է՝ մօտենալ մեծ նաւին, մանաւանդ հարիւր թնդանօթ ունեցող նաւին. բայց խաղաղ ժամանակ կարելի է մօտն երթալ:

Կայսեր հետ ան միշտ կատակով եւ սրամտօրէն կը խօսէր՝ երբ էջը ուզէր նիւթի իր լուրջ հանգամանքով անոր ներկայացնել:

Կայսեր բարկութիւնը ժպիտի փոխուած էր. ուսուցչապետին պատկերաւոր բացատրութիւնը շահած էր անոր սիրտը: Նա հարցուց անմիջապէս, թէ ո՞ւր է հիմայ իր հովանաւորը: Չառէրվայդ հասկցաւ վեհափառին մտահոգութիւնը, եւ յայտնեց թէ ան հաւատարիմ մնացած է, եւ Ակադեմիան էջ թողած:

— Ի՞նչ էր նկարած, հարցուց կայսրը:

— Ծովանկար մը, Տէր իմ:

— Վաղը կ'ուզեմ տեսնել դայն:

Ուսուցչապետն յարգանքով գլուխ տուաւ ինքնակալին ու դահլիճէն հեռացաւ յաղթանակով եւ ուրախ սրտով: Իր յաջողութիւնը պատմեց վշտաբեկ Այվազովսկիի, իշխաններուն եւ իշխանուհիներուն:

Մարիա Նիկոլայէվնա մեծ իշխանուհին այն աստիճան ուրախացաւ անոր աւետիսին վրայ՝ որ իր յարգելի վարպետին եւ միջնորդին ճակատն համբուրեց իսկոյն:

Հետեւեալ օր՝ Կայսեր ներկայացուցաւ Այվազովսկիի նկարահանողէս գրած պատառը: Վեհափառը հաճոյքով դիտեց նկարը՝ եւ գովեց Այվազովսկիի կարողութիւնը:

Ասկէ զատ պարզեց նկարչին 1000 ռուբլի, եւ զինքն ուղեկից կարգեց մեծ իշխան Կոստանդին Նիկոլայէվիչի, որ ամառուան ընթացքին նաւային ճամբորդութիւն մը պիտի կատարէր Ֆինական ծոցի մէջ:

Երիտասարդ Ակադեմականի ձախորդ օրերն այստեղ վերջ առին: Նա վերստին դատարար պաշտպանը՝ որուն էջը կարող բաւական նաչափ իր երախտիքն յայտնել:

Ուրիշ տեսակէտէ՝ նա կարեւոր յաղթանակ մը տարաւ Տաննէի վրայ: Այս յաղթութիւնն այնքան նշանակութիւն ունեցաւ Այվազովսկիի ապագայ փառքին համար, որ իր անունին ու համաշխարհային հռչակին հիմնական նախագծերէն մին կազմեց, եւ առանց անոր եթէ ոչ ամբողջովին գոնէ մասով՝

ոչնչացումի դատապարտուած պիտի ըլլար արտակարգ ընդունակութիւն մը:

Պարզուած էին առագաստները, եւ ափառնային հաճոյական հովիւ հրաւիրեց նկարիչը բացուիլ ու հեռանալ ծովով, տեսնել նորանոր ափունքներ, ուրիշ երկիրներ ու մթնոլորտի երեւոյթներ, որոնք պիտի ճշմարտացնէին իր ստեղծագործութեան շտեմարանը, նրբութեան առաջնորդելով իր արուեստը, ու կատարելութեան՝ իր ձեռք բերած տեխնիքը:

Նաւազնացութիւնը տեղի ունեցաւ 1837ին: Նա տակաւին էր աւարտած Ակադեմիայի ամբողջական ընթացքը: Երկու տարի վերջ՝ 1837ին, «Առաջին կարգի նկարիչ» անուանուեցաւ Ակադեմիայէն՝ որուն իր վերջնական հրաժեշտը տուաւ իրրեւ Ակադեմական ուսանող:

Այլեւս ամբողջ աշխարհն իր առջեւն էր պարզուած: Նա միշտ ուսումնասէր, միշտ աշխատասէր ու նորութիւններ որոնող՝ կը փափաքէր տեսնել այն երկիրներն, ուր վերաբնակները ծագկեցան, ուր հանճարեղ արուեստագէտներ անհամար գլուխ-գործոցներ թողուցին գալիք մարդկութեան:


Նա կ'երազէր ամէնէն յառաջ Իտալիան, որուն հռչակաւոր գաւազներուն արտադրութիւնները սորված էր նա զբեքէն եւ դասաթիւնները սորված էր նա զբեքէն եւ դասաթիւններէ: Նա գոհ էր անոնցմով, ան խօսութիւններէ: Նա գոհ էր անոնցմով, ան կ'ուզէր որ խանդավառ անոնց իսկական գործերուն տպաւորութեան տակ ու այդպէս հետեւող մը հանդիսանայ անոնց՝ որ Գեղարուեստի փառքը պանծացուցին իրենց փառքին հետ:

Իտալիա, Իտալիա... կապո՞յտ երկիրք, կապո՞յտ ջրեր...:

Ու իր երազը պիտի իրականանար:

(Շարունակելի:)

Հ. ԱՆՊՐԵԱՍ ԵՐԸՂԱԳԵԱՆ



ՀԱՅ ԳՐԵՐՈՒ ԲԵՐԵՓՈՒԹԵԱՆ ՀԵՐՑԸ

Նոր է հայերէն գրերու բարեփոխութեան հարցը:

Բուն Մեսրոպեան երկաթագիրը Միջին-Մեսրոպեանի, եւ սա խոշոր բոլորգրի, ապա փոքր բոլորգրի բարեփոխուեցաւ. բոլորգրէն ծագում առին շեղագիրն ու նոտրագիրը:

ԺՁ. դարուն, երբ սկիզբ առաւ հայ տպագրութիւնը, առ այս յարմարագոյն տառ բոլորգրին ընտրուեցաւ, իսկ բուն-մեսրոպեան-ները գործածուեցան իբր գլխագիր: Այսպէս սպահովուեցաւ բոլորգրին տպագրութեան արուեստի մէջ մշտնջենաւորութիւն:

Տպագրութեան արուեստի զարգացման գրգռեցիկաց եղան փորձեր զարգացնել նաեւ տառերու ձևերը: Մատթէոս Վանանդեցի, Ոսկան, յաջորդաբար Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնները, ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ ձուլարանները, պատրաստեցին նոր մայրեր, պէս պէս մեծութեամբ եւ թանձրութեամբ. մնալով հաւատարիմ բոլորգրի հայկական նկարագրին, կատարելորդի հայկական ձևերը՝ ուշադիր լագործեցին տառերու ձևերը՝ ուշադիր տպագրական արուեստի յարմարութեան եւ գեղագրութեան:

Արամեան ի Պարիս առաջին խիզախ ձեռնարկութիւնն ըրաւ՝ շեղելով իւր նախորդներու ընտրած ճանապարհէն՝ մուծել բոլորգրի մէջ փոխառութիւններ բուն-մեսրոպեանէն եւ ձուլել տառերը լատինական գրերու կաղապարին վրայ: Այս ուղղութեամբ տուաւ փորձեր նաեւ Գեոր. Արսէն Այսրեան՝ հանելով հրապարակ «արդիական» (moderne) ձևով տառաձևերը, որոնք կը ձգտէին լատինացի տառերու հատածի նմանութեամբ տիպական տառերու հատածի նմանութեամբ կերպաձևել հայկականները, առանց շատ ձեւափոխելու բոլորգրին էական նկարագիրը: Թէպէտ վայելուչ, գեղարուեստական տեսք կու տային այս փորձերը հայ տառերուն, բայց իրենց նրբութեամբը կոչուած էին տպագրութեան մէջ ընդհանուր գործաչին տպագրութեան մէջ ընդհանուր հարձուրդներու գտնելու: Տեղոյ խնայութեան հարցին դոյզն չափով միայն կը տրուէր լուծում:

Անյարմարութիւնները, գործնք կ'երեւցընէին բոլորգրի տառերը տպագրութեան արուեստի մէջ, կը կայանային այն բազմաթիւ արտակարգագէտներու մէջ, որոնք դուրս կը մնային գրերու իրանէն եւ այսպէս թէ ձուլուածքը կը գեթուարցնէին, թէ շարուածքն